«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկ
"Environmental project implementation unit"
state institution
"Бюро по реализации экологических программ"
государственное учреждение

0005, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 65Ա3
65A3 Tigran Mets ave., Yerevan, 0005, Armenia
0005, пр. Тиграна Меца 65А3, Ереван, Армения
☎(+ 37410)651-631

http://www.epiu.am/
Էլ.փոստ /E-mail/ эл. почта info@cep.am

№ 1-06/27Ա/644

«17» նոյեմբերի 2025թ.

«Ռուբեն Խաչատրյան» ԱՁ-ի տնօրեն
Ռուբեն Խաչատրյանին
Հեռ +37477311190
Էլ հասցե՝ tenders2025@mail.ru

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Խաչատրյան,

ՇՄՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Ռուբեն Խաչատրյան» ԱՁ-ի միջև 2025 թվականի հոկտեմբերի 6-ին կնքվել է N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-25/95 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 5 246 000 /հինգ միլիոն երկու հարյուր քառասունվեց հազար/ ՀՀ դրամի չափով: Պայմանագրի կատարման ժամկետը ավարտվել է սույն թվականի նոյեմբերի 5-ին: Պայմանագրում նախատեսված ապրանքը չի մատակարարվել: 2025 թվականի նոյեմբերի 14-ին Ձեզ ուղարկվել է գրություն, որով Ձեզ առաջարկվում էր պարզաբանել ապրանքը մատակարարելու ժամկետը: Սակայն պատասխան գրությունով Դուք հրաժարվեցիք մատակարարել ապրանքը:

Համաձայն պայմանագրի 2.1.1 և 2.1.7.1 կետերին Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը: Մասնավորապես՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __10__ օրից ավելի

Հիմք ընդունելով Ռուբեն Խաչատրյանի գրությունը և վերոգրյալը «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը միակողմանի լուծում է Պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով:

Միաժամանակ, հայտնում եմ, որ համաձայն ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-25/95 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետի՝ նշված ժամկետում (10 աշխատանքային օրվա ընթացքում) Ձեր կողմից Արմսվիսբանկ ՓԲԸ Հ/Հ 2500010969902400 հաշվին պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 640 000 (վեց հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամի և 960 000 (ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով վճարելու, վճարման հանձնարարականների բնօրինակները ՇՄՆ ԲԾԻԳ ՊՀ ներկայացնելու դեպքում, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության, «Ռուբեն Խաչատրյան» ԱՁ-ը չի ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար Արմեն Եսոյան

Կատարող՝
«ԲԾԻԳ» ՊՀ-ի գործերի կառավարման և
գնումների բաժնի պետ
Դավիթ Նիկողոսյան
(+37410) 651-631